ՂՐԻՄԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(XVIII դարի վերջ—XIX դարի սկիզբ)

Պատմ. գիտ. դոկտոր Վ. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Ղրիմահայության, ինչպես նաև բուն Ղրիմի տնտեսական կյանքի համար 1778 թվականը ճակատագրական դարձավ։ Ղրիմի խանին ռուսական արքունիքից կախման մեջ դնելու նպատակով հայերին ու հույներին թերակղզուց տեղահանելու քաղաքականությունը կառավարությանը կանգնեցրեց մեծ դժվարությունների առջև։ Այդ տեղահանության հետևանքով թերակղզին զրկվել էր իր արդյունագործող բնակչությունից, Ռուսաստանի առաջ կանգնելով «դրանից խոցված տեսքով»[1]։

Եվ, հիրավի, Ղրիմի տնտեսական կյանքը այն ժամանակվա իր հիմնական ճյուղերով (առևտուր, արհեստագործություն, երկրագործություն) հայերի և հույների հեռանալով կատարյալ քայքայում ապրեց։ Թաթար ազգաբնակչությունը ի վիճակի չէր գոցելու այն բացը, որն առաջացել էր քրիստոնյաների հեռանալու պատճառով և ամենից շատ ինքն էր տուժում արհեստագործական արտադրանքի ու մթերքների պակասից, քրիստոնյա ազգաբնակչության հաշվին ձրի կամ կիսաձրի ապրելու դարերով ավանդական դարձած հնարավորության կորստից։ Տնտեսական այսօրինակ անմխիթար վիճակ էր տիրում ոչ միայն միացմանը (1783 թ.) հաջորդած առաջին տարիներին, այլև դրանից տասնամյակներ հետո։

Տավրիկյան մարզի կառավարիչ Վ. Վ. Կախովսկու վկայությամբ, կառավարությունը, իրոք, «առանձնապես հոգ չէր տանում» հիանալի այդ երկրամասի «տխուր պատկերը» վերափոխելու ուղղությամբ[2]։ Եվ դա ոչ թե կառավարության անգիտության հետևանքով, այլ պարզապես այն պատճառով, որ երկրամասի բնակեցումն ու նրա տնտեսական կյանքի զարթոնքը պահանջում էին մեծ միջոցներ։

Սակայն ինչ-որ քայլեր, այնուամենայնիվ, ձեռնարկվում էին, և ամենից առաջ՝ թերակղզին բնակեցնելու ուղղությամբ։ 1798 թ. փետրվարի 13-ին ընդունվում է մանիֆեստ՝ Ղրիմը օտարերկրյա գաղթականներով բնակեցնելու մասին։ Մանիֆեստը բոլոր օտարերկրացիներին, առանց կոչման և դավանանքի խտրության, իրավունք էր վերապահում, ըստ իրենց ցանկության, բնակություն հաստատել Ղրիմի թերակղզու քաղաքներում ու գյուղերում, բացառությամբ Սևաստոպոլի, իբրև ռազմական նավահանգստի։ Մանիֆեստի 10-րդ կետը բոլոր գաղթական օտարերկրացիներին տալիս էր արտոնություններ, ազատում զինվորական ծառայությունից[3]։

---

[1] П. Сумароков, Досуги крымского судьи, ч. I, СПб., 1803, *էջ 160։*

[2] В. Х. Кондоракн, В память столетия Крыма, М., 1883, т. 1—5, *էջ 44։*

[3] Центральный государственный исторический архив СССР *(այսուհետև՝* ЦГИА СССР), ф. 1286, оп. 4, д. 672, *թ. 2, 2* об.

Ահա այսպիսի պայմաններում Ղրիմից ելած հայերից շատերը, ինչպես նաև մեծ թվով արևմտահայեր, XVIII դարի վերջին և XIX դարում զանգվածաբար թե առանձին ընտանիքներով, օրենքով սահմանված թե զարտուղի ճանապարհներով սկսում են քաշվել Ղրիմ, աստիճանաբար վերակենդանություն տալով ղրիմահայ կյանքին։ Գաղութը հիմնականում կազմավորվում է XVIII դարի 90-ական թթ. և XIX դարի առաջին երկու տասնամյակներին, թեև հայերի գաղթը դեպի Ղրիմ, մանավանդ Թուրքիայից, չի դադարում մինչև առաջին աշխարհամարտն ու մեծ եղեռնը։

Արտագաղթեցումից անմիջապես հետո այս կամ այն պատրվակով հայեր էին մնացել հիմնականում Թեոդոսիայում, բայց աննշան քանակությամբ։

Կաֆայի (Թեոդոսիայի) 1784 թ. հատակագծի համաձայն, քաղաքում կային 29 մզկիթ, 13 հունական և 22 հայկական եկեղեցի (իհարկե, չգործող), 6 բաղնիք, 33 ջրավազան. քաղաքում ապրում էին 30 հայ, 63 հրեա և 694 թուրք[4]։ Նշված «30 հայը», հավանաբար, թերի տվյալ է, որովհետև այդ նույն ժամանակ կազմված պաշտոնական մի այլ տեղեկանքում ասված է, թե Կաֆայում ապրում են 80 հայ տղամարդ (առանց ընտանիքի), 70 տղամարդ և 75 կին՝ ընտանիքներով (սրանք բնիկ ղրիմցիներ էին) և 13 հոգի՝ անատոլիացի հայեր[5]։ Մի փոքր ավելի ուշ սրանց թիվը նկատելիորեն աճում է. ինչպես վկայում է ճանապարհորդ Ժիլբեր Ռոմը, 1786 թ. քաղաքում արդեն ապրում էին մոտ 700 հայեր[6]։ Երբեմնի բարգավաճ Թեոդոսիայի հայ գաղութի կյանքը այս շրջանում աննշմար էր ու անհրապույր։ Զբաղվելով ձկնորսությամբ, գրեթե անեկամտաբեր մանրածախ առևտրով և հյուրանոցներ պահելով, կաֆահայերը ապրում էին այն հույսով, որ վաղ թե ուշ կվերադառնան Կաֆայի և նրա բազմահազարանոց հայ գաղութի ծաղկուն ժամանակները[7]։

Ղրիմի հայկական գաղութի վերականգնման ճանապարհին առաջին խոշոր իրադարձությունը հայ կաթոլիկների վերադարձն էր Եկատերինոսլավից կրկին Ղրիմ՝ Ղարասուբազար քաղաքը։ 1778 թ. Ղրիմի քրիստոնյա մյուս ազգաբնակչության հետ միասին կաթոլիկ հայերը ևս, նրանց հավասար արտոնություններով, դուրս էին բերվել թերակղզուց։ Տարբերությունը միայն այն էր, որ Նախիջևանի փոխարեն նրանք հաստատվել էին Եկատերինոսլավ I-ի (հետագայում Սովոմոսկովսկ) շրջանում։ Նրանց բնակությունը այստեղ կարճատև եղավ, մեկ տասնամյակից մի փոքր ավելի՝ 1778 թ. աշնանից մինչև 1790 թ.[8]։ Հայ կաթոլիկների Եկատերինոսլավից հեռանալու ձգտումը թելադրվում էր տնտեսական ծանր պայմաններով, որ բաժին էին ընկել նրանց այստեղ։ Եկատերինոսլավի այն շրջանը, ուր հաստատվել էին հայ կաթոլիկները, բոլորովին անհարմար էր առևտրական գործունեություն ծավալելու համար։ Դրությունն ավելի էր բարդանում նրանով, որ Սամար և Կոլչենի գետերը, ափերից դուրս գալով, հեղեղում էին տները և նույնիսկ վտանգի ենթարկում այնտեղ ապրողների կյանքը[9]։ Այս էլ ստիպում է նրանց 1787 թ. դիմելու Գ. Ս. Պոտյոմկինի

---

4 Записки Одесского общества истории и древностей (այսուհետև՝ ЗООИД), т. 12, էջ 280։

5 ЗООИД, т. V, էջ 123։

6 Жильбер Ром, Путешествие в Крым в 1786 г., Ленинград, 1941, էջ 48։

7 В. Х. Кондораки, նշվ. աշխ., էջ 55։

8 ЦГИА СССР, ф. 1286, оп. 1, д. 46, թ. 103 об.

9 Նույն տեղում։

միջնորդությանը՝ Ղրիմ վերադառնալու համար թույլտվություն ստանալու խնդրանքով[10]։

Վերջինիս համար դժվար չէր բավարարել խնդրատու համայնքին։ Այդպիսի թույլտվությունը միանգամայն ներդաշնակ էր Ղրիմը բնակեցնելու կառավարական խնդրին, որը, մանավանդ թերակղզուց թաթարների՝ դեպի Թուրքիա մասսայաբար հեռանալու[11] հետևանքով, պահանջում էր վճռական քայլերի դիմել։ Բացի դրանից, հայ կաթոլիկները իրենց խնդրանքը գլուխ բերելու նպատակով համաձայնվում էին այդ տեղափոխությունը կատարել սեփական միջոցներով[12]։ Այս հանգամանքները նկատի ունենալով, Գ. Ս. Պոտյոմկինը հայ կաթոլիկներին շնորհում է թույլտվություն, մի բան, որին դեռ չէին կարող հասնել նախիջևանցի խնդրատուները։ Նովոմոսկովսկից Ղրիմ վերադարձածների թիվը 1000 մարդ էր, նրանց մեջ կային նաև լուսավորչական հայեր և նույնիսկ հույներ՝ թվով 225 հոգի։ Սրանք 1778 թ. արտագաղթի ժամանակ հայ կաթոլիկների հետ միասին նույն վայրերն էին տեղափոխվել և մտել հայ կաթոլիկ դատարանի իրավասության տակ[13]։

Ղրիմ վերադարձած հայ կաթոլիկական համայնքի համար պահպանվեցին բոլոր այն արտոնությունները, որոնք շնորհվել էին համայնքին հոգևոր առաջնորդ Հակոբ վարդապետի անունով 1779 թ. նոյեմբերի 14-ին տրված հրովարտակով և որոնք 1800 թ. ապրիլի 18-ին հաստատել էր նաև Պավել Առաջինը. համայնքի անդամները դասվում էին պետական բնակիչների շարքը, տասը տարի ժամկետով աղատվում էին հարկերից ու տուրքերից, դրանից հետո վճարելու էին միայն ծխահարկ, կարող էին զբաղվել առևտրով, արհեստներով, գյուղատնտեսությամբ, հիմնել գործարաններ ու ֆաբրիկաներ, ներքին գործերը վարելու համար պահել դատարան[14]։

Ղրիմում հայերի բնակեցման գործին զգալի մասնակցություն է ցուցաբերում ռուսահայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը։ Թերևս նա զղջացել էր 1778 թ. արտագաղթի կազմակերպմանը ցույց տված իր փութկոտ օժանդակության համար։ Մի բան, սակայն, ակներև է՝ այն, որ 1787 թ. Ղրիմ կատարած այցից հետո նա Նոր Նախիջևան էր վերադարձել ցնցող տպավորությամբ. «Զգալի եղև մեզ յոյժ,— նշում էր նա,— տեսանելն զաւերութիւն քաղաքացն, եկեղեցացն և վանօրէիցն մերոց, լի տրտմութեամբ դարձանք անտի (Ղրիմից— Վ. Մ.) ի Նախիջևան, ի նոյեմբերի 24»[15]։

Տավրիկիայում հայերի հաստատման գործը գլուխ բերելու մտայնությամբ Արղությանը 1793 թ. կրկին գալիս է Ղրիմ, որտեղ արդեն բավականին թվով հայեր կային։ Նա դիմումներ է անում կառավարությանը՝ Ղրիմի մի շարք վայրեր հայերին հատկացնելու խնդրանքով։ 1794 թ. Արղությանը Պլատոն Զուբովին այս առթիվ գրում էր, թե լինելով Ղրիմում, ինքը այնտեղ հանդիպել է

---

10 Նույն տեղում։ Տե՛ս նաև՝ А. Скальковский, Опыт статистического описания Новороссийского края, Одесса, 1850, էջ 292։

11 А. И. Маркевич, Переселение крымских татар в Турцию в связи с движением населения в Крыму, «Известия» Академии наук СССР, Отделение гуманитарных наук, 1928, էջ 380։

12 ЦГИА СССР, ф. 1286, оп. 1, д. 46, թ. 104.

13 Նույն տեղում, թ. 103։

14 Նույն տեղում, թթ. 103—104։

15 «Դիւան հայոց պատմութեան», Թիֆլիս, 1911, գիրք Թ, էջ 14։

«բավականին մեծ թվով հայերի. նրանց մի մասը մնացել է Նովոմոսկովսկի շրջանը վերաբնակեցվածներից, իսկ մյուսները նորերս եկածներ են։ Այս հայերից Ղարասուբազարում ապրող մոտ 200 ընտանիքներ, Անատոլիայից ներգաղթածներ, ինձ հայտնեցին իրենց վճռական ցանկությունը՝ սեփական ծախքով տեղափոխվելու ավերված Թեոդոսիա քաղաքը, որտեղ այժմ մնացել են հայկական շատ եկեղեցիներ և վանքեր, իսկ արհեստավորները՝ Հին Ղրիմ, քանի որ այնտեղ դիրքը հարմար է և այնտեղի թե՛ ջրերը և թե՛ օդը կարող են երանգ հաղորդել այն արտադրանքին, որ կթողարկեն ֆաբրիկաները»[16]։ Հ. Արղությանն ընդգծում էր, որ եթե հայերի այդ խնդրանքը հարգվի, ապա դա մեծապես շահավետ կլինի պետության համար, «որովհետև այստեղ բնակվելը առիթ կտա շատ հայերի Անատոլիայից և սահմանակից այլ վայրերից տեղափոխվելու և ընդունելու ռուսահպատակություն»[17]։

Հ. Արղությանի այս միջնորդությունը շուտով արժանանում է կառավարության դրական պատասխանին, որովհետև, ինչպես ասվեց, թերակղզում հայերի հաստատվելը միանգամայն համապատասխանում էր Ղրիմի բնակեցման ընդհանուր խնդիրներին։ 1794 թ. ապրիլի 30-ին կոմս Պլատոն Զուբովը Տավրիկյան մարզի կառավարիչ Ս. Ս. Ժեգուլինին կարգադրում է թույլ տալ Ղարասուբազարում և Ղրիմի այլ վայրերում ապրող հայերին, ըստ իրենց ցանկության, վերաբնակվելու Հին Ղրիմ և Թեոդոսիա, այդ վայրերում նրանց հատկացնել անհրաժեշտ քանակությամբ հողեր՝ մշակելու և հատուկ տեղեր՝ շենքերի ու կրպակների շինարարության համար. ամեն կերպ օժանդակել Հ. Արղությանին՝ արտասահմանից եկող հայերին Ղրիմում տեղավորելու գործում[18]։

Այս թույլտվության լուրը իմանալով, Հ. Արղությանը վերստին աճապարում է Տավրիկիա։ Տեղում գործերին ծանոթանալուց հետո նա մշակում է հայերին տեղավորելու և նրանց կյանքը կարգավորելու գործնական միջոցառումներ և հուլիսի 8-ին դրանք ներկայացնում Ս. Ս. Ժեգուլինին։ Հ. Արղությանը առաջարկում էր. թեև Ղրիմի տարբեր ծայրերից Թեոդոսիա տեղափոխվող հայերի թիվը առայժմ մեծ չէ, սակայն իրեն հայտնի տվյալներով շուտով Անատոլիայից և այլ վայրերից այնտեղ բնակության կգան մեծ թվով հայ ընտանիքներ, ուստի անհրաժեշտ է Թեոդոսիայում բոլոր այդ հայերին հատկացնել առանձին թաղամաս, տներ, կրպակներ, պահեստաշենքեր, հյուրանոցներ ու մինչև 1000-ի հասնող այլ շենքեր, ինչպես և համապատասխան հողեր։ Նույն նպատակահարմար էր գտնում հայերին տալ սարալանջից մինչև ծովափն ընկած տարածությունը և այն չափելու համար իրեն հետ Թեոդոսիա գործուղել հողաչափ։ Արղությանը խնդրում էր Թեոդոսիայի Սբ. Սարգիս հայկական եկեղեցու բակում գտնվող իջևանատունը կրկին վերադարձնել եկեղեցուն, որպեսզի վերջինիս տերիտորիան չնեղանա, և անհրաժեշտ կարգադրություն անել ում որ հարկն է, որպեսզի ոչ մի արգելք չհարուցվի Թեոդոսիային մերձակա բարձունքի վրա գտնվող հայկական վանքի վերականգնման գործին։ Թեմի առաջնորդը առաջարկում էր Թեոդոսիայում աշխատանքներն ավարտելուց հետո հողաչափին ուղարկել Հին Ղրիմ՝ այնտեղ հայերին հատկացվող հողերը սահմանագրծելու համար։ Քանի որ Սբ. Խաչ վանքի հողերը տակավին չեն բաժնեհատված

16 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, ց. 1, գ. 1465, թ. 54ա։

17 Նույն տեղում, թ. 54բ։

18 «Известия Таврической ученой архивной комиссии» (ИТУАК), Симферополь, № 25, էջ 93։

ու սահմանագծված, ինչպես նաև չեն հանված Գ. Պոտյոմկինի նվիրած Սուդակի երկու այգիների պլանները, Արղության անհրաժեշտ էր համարում այդ նպատակով առանձնացնել մի հատուկ հողաչափ, որը իր իսկ ներկայությամբ կըկատարի այդ աշխատանքները. առաջարկում էր դրանից հետո այդ այգիներին տիրելու մասին իրեն տալ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը։ Որովհետև Սբ. Խաչ վանքի տիրույթներից կտրված և ուրիշներին բաշխված հողերը վերադարձնելն այլևս անհնարին էր, Արղությանն առաջարկում էր դրանց փոխարեն վանքին տալ այլ հողակտորներ։ Վանքից վերցված և մետաքսի գործարանին տրված հողերը ևս Արղությանը պահանջում էր վերադարձնել վանքին՝ այնտեղ գոմեր և աղքատների ու մշակների համար բնակելի շենքեր կառուցելու նպատակով։ Նրա կարծիքով դա հնարավորություն կտար վերականգնելու անշքացած վանքը, խթան կհանդիսանար հայերի՝ Ղրիմում բնակություն հաստատելու համար։ Սբ. Փրկիչ վանքը (Բախչելի, այժմ Բոգատոյե գյուղի մոտ) նույնպես իր տնօրինությանը հանձնելու նպատակով Արղությանը առաջարկում էր վանքի հողերից ու շենքերից դուրս բերել այնտեղ խուժած թաթարներին[19]։ Տավրիկյան մարզի կառավարիչ Ս. Ս. Ժեգուլինը հավանություն ու համաձայնություն է տալիս Արղության առաջարկներին և իր կարծիքը կետ առ կետ գրավոր կերպով ուղարկում է նրան[20]։

Ղրիմում հայերի բնակեցման իր ծրագիրը իրագործելու համար Հ. Արղությանը ամբողջ երեք ամիս մնում է այնտեղ, գործնական քայլեր անում՝ լուծելու այդ խնդրի հետ կապված մեծ ու փոքր բոլոր հարցերը։ Այս շրջանում նրան մենք տեսնում ենք մերթ Թեոդոսիայում, մերթ Սբ. Խաչ վանքում և Հին Ղրիմում, մերթ Սուդակում և Ղարասուբազարում, մերթ էլ՝ կրկին Թեոդոսիայում։ Այս վերջինում նա հողաչափ Սամբուլովի հետ թաղ առ թաղ շրջում է, ընտրում հայերին հատկացվելիք շենքերն ու հողամասերը։

Չնայած Ղրիմում հայերին բնակեցնելու ուղղությամբ Հ. Արղության թափած ջանքերին, թերակղզուց նրա հեռանալուց հետո այդ գործը գրեթե անկատար մնաց։ 1798 թ. սեպտեմբերին Ռուսաստանում բնակվող հայ համայնքների կարիքների մասին կառավարությանը ներկայացրած գրության մեջ Հ. Արղությանը դարձյալ բարձրացնում էր ղրիմահայոց հարցը, վերստին առաջ քաշելով Թեոդոսիայի մի մասն ու ամբողջ Հին Ղրիմը հայերին հատկացնելու և Սբ. Խաչ վանքի հողերը սահմանագծելու պահանջը[21]։ Դրան հաջորդած 1799 թ. ապրիլի 15-ի կայսերական հրամանը թեև ընդառաջ էր գնում ղրիմահայերի այս խնդրանքին[22], սակայն գործը դարձյալ տեղից չշարժվեց։

1790-ական թթ. վերջերին Ղրիմի տարբեր քաղաքներում ապրող հայերի մեջ ծագում և գնալով ամրապնդվում է Հին Ղրիմ քաղաքում հավաքվելու, այդ քաղաքը զուտ հայկական բնակավայր դարձնելու գաղափարը, մի մտայնություն, որն իր արտացոլումն է գտնում 1798—1799 թթ. նրանց կողմից իշխանություններին ներկայացրած խնդրանքներում։ Այս խնդրագրերը չէին հանգում միայն հիշյալ թույլտվությունը ստանալուն, այլ գնում էին ավելի հեռու, պահանջելով ապագա հայկական այդ քաղաքի բնակչությանը տալ տնտեսական

19 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, ց. 1, գ. 1465, թթ. 66—69։

20 Նույն տեղում, թթ. 72—75։

21 ЦГИА СССР, ф. 1374, оп. 2, д. 1815, թթ. 21—22.

22 «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», т. I, էջ 197։

արտոնություններ և իրավական ինքնություն՝ իր գործերը վարելու հարցերում։ Կառավարությունը, վերջապես, լիովին ընդառաջում է Ղրիմում հավաքված հայերի խնդրանքին, դրա իրականացման մեջ տեսնելով նաև կայսրությանը նորերս միացված երկրամասի տնտեսական զարգացմանը նպաստող հեռանկարներ։ Այս վերջին շարժառիթները, անշուշտ, առաջատար դեր են խաղացել ղրիմահայոց անունով 1799 թ. հոկտեմբերի 28-ի հրովարտակը ընդունելու գործում։ Հրովարտակը, որը արտոնություններին և իրավական հարցերում հիմնականում կրկնում էր նախկինում հայերին տված առանձնաշնորհումները, իր առաջին հոդվածով թույլ էր տալիս բոլոր ցանկացողներին բնակություն հաստատել Հին Ղրիմ քաղաքում։ Երկրորդ հոդվածը եկեղեցական արարողությունների կատարման համար Թեոդոսիայում ապրող հայերին էր տալիս այնտեղ եղած հայկական եկեղեցիներից Հրեշտակապետ, Սբ. Սարգիս և Սբ. Գևորգ եկեղեցիները և քաղաքից դուրս գտնվող Վերափոխման վանքը, նրան պատկանող հողերով հանդերձ՝ եկեղեցիներին առընթեր եղած մարդկանց թվին համապատասխան, ինչպես դա սահմանված էր ռուսական ծխերի համար. եկեղեցիներն ու վանքը պահվելու էին հայ համայնքի միջոցներով։ «Իսկ Թեոդոսիա քաղաքի ներսում՝ նրա արտաքին պարսպից մինչև ծովափը, մեծ մզկիթից մինչև Հունական սլոբոդան ձգվող լայնությամբ ընկած հին հայկական գյուղը (իմա՝ թաղամասը—Վ. Մ.), որտեղ գտնվում են վերոհիշյալ եկեղեցիները, հրամայվում էր տալ հայերին, «այդ գյուղը կոչելով Հայկական սլոբոդա»։ Բացի դրանից, Սբ. Սարգիս եկեղեցուն էր հանձնվում Աֆամ-խան անվամբ քարվանսարան։ Հրովարտակի երրորդ հոդվածով կայսրը հրամայում էր Հին Ղրիմին մերձակա Սբ. Խաչ վանքին նախատեսված հողերը հատկացնել վանքին և տալ դրանց պլանները։ Չորրորդ հոդվածով հաստատվում էին 1799 թ. հունվարի 4-ի և ապրիլի 15-ի հրամաններով կայսրության մեջ ապրող հայերին տրված դավանանքի ազատությունն ու իրավունքները և նրանց արտոնվում էր իրենց գյուղերում կառուցել վանքեր, եկեղեցիներ, զանգակատներ և եկեղեցական այլ շինություններ, գրանցում ազատորեն կատարել ժամասացություն և կրոնական արարողություններ։ Հոգևոր գործերում հայերը ենթարկվելու էին էջմիածնի կաթողիկոսին և նրա ռուսաստանյան ներկայացուցչին։ Հինգերորդ հոդվածը պարտավորեցնում էր Հին Ղրիմը բնակեցնելուց և քաղաքին 12 հազար դեսյատին հող առանձնացնելուց հետո այնտեղ հիմնել հայկական դատարան, մադիստրատի անվան տակ, և նրանում դատական ու հայցային գործերը լսել հայերեն լեզվով, հայկական հին սովորություններին ու օրենքներին համապատասխան։ Վեցերորդ հոդվածը հայերին դասում էր պետական բնակիչների շարքը և համաձայն 1799 թ. ապրիլի 15-ի հրամանի՝ նրանց 10 տարով ազատում բոլոր տեսակի տուրքերից. դրանից հետո վաճառականները պիտի վճարեին դրամագլխի մեկ ռուբլուց մեկ տոկոս, մեշչաններն ու արհեստավորները՝ ծխից երկուական ռուբլի, իսկ գյուղացիները, որոնցից յուրաքանչյուրին սահմանված էր տալ 30 դեսյատին հող, ամեն դեսյատինի դիմաց՝ 5 կոպեկ։ Հայերը ազատվում էին զորքերին օթևան տալուց, նաև զինվորական ծառայությունից, բայց ցանկացողներին դա չէր արգելվում։ Յոթերորդ հոդվածը հայերին շնորհում էր առևտրով ու արհեստներով զբաղվելու ազատություն և արտոնություններ. նրանք կարող էին առանց առևտրական ներքին մաքսեր վճարելու ազատորեն առևտուր անել կայսրության մեջ և նրա սահմաններից դուրս, կառուցել առևտրանավեր, հիմնել գոր-

ծարաններ ու ֆաբրիկաներ, պտղատու այգիներ, թորել գինի և ֆրանսիական օղի, փոքր չափերով գրանք վաճառել իրենց գյուղերում և տակառներով արտահանել Ռուսաստանի քաղաքները։ Վերջին, ուրեմն հողվածով կայսերական հրովարտակը բոլոր զինվորական և քաղաքացիական պետերին, ինչպես նաև ատյաններին հանձնարարում էր ոչ միայն թույլ տալ և չխանգարել Հին Ղրիմի հայերին՝ օգտվելու շնորհվող արտոնություններից, այլև անհրաժեշտության դեպքում նրանց նախազգուշացնել վերահաս վնասներից ու վտանգից և ամեն կերպ աջակցել նրանց հոգևոր ու աշխարհիկ վարչություններին[23]։

1799 թ. հոկտեմբերի 28-ի հրովարտակի ընդունումից հետո էլ Հին Ղրիմում և առհասարակ թերակղզու վրա հայերի բնակության գործը հանդիպում է բավականին լուրջ դժվարությունների, որոնք կապվում էին նյութական միջոցների սղության, հողային, վարչական, իրավական և այլ հարցերում տեղական իշխանությունների ու հայերի միջև ծագած տարբեր բնույթի վեճերի, մանավանդ նախիջևանցիներին ետ ուղարկելու խնդիրների հետ։

Հին Ղրիմ քաղաքի բնակեցման դժվարությունները, բացի վերևում նշվածներից, կապված էին նաև մեկ այլ հարցի հետ։ Բանն այն է, որ տարբեր քաղաքներից և առաջին հերթին Ղարասուբազարից, Սիմֆերոպոլից ու Եվպատորիայից բոլոր հայերը չէին, որ ցանկանում էին տեղափոխվել Հին Ղրիմ։ Այստեղ նրանց հավաքելու գաղափարի հեղինակն ու իրագործման ջատագովը հոգևորականներն էին և ամենից առաջ ինքը՝ Արղությանը[24]։ Հոգևոր դասի այսպիսի նախաձեռնությունը առաջին հերթին կապված էր եկեղեցու նյութական շահագրգռվածության և ապա՝ ազգային-կրոնական ծեսերի ու դավանանքի պահպանման հետ։ Տարբեր վայրերում ցրիվ եկած հայությունը երկու դեպքում էլ եկեղեցուն դժգույն ապագա էր խոստանում։

Հին Ղրիմի բնակեցումը հայերով դժվարանում էր նաև նրանով, որ 12.000 դեսյատին հող հատկացնելու խնդիրը ձգձգվում և խոչընդոտների էր հանդիպում։ 1804 թ. համայնքի կողմից ընտրված հավատարմատարներ Խաչերես Մանուկովի և Բաղդասար Բեդրոսովի միջնորդությամբ Թեոդոսիայից Հին Ղրիմ եկած ներքին զեմստվային դատարանի չինովնիկը բավարարվեց սոսկ այդ առթիվ բանավոր կարգադրություններ անելով, և համայնքի հողային սահմանները տարիներ շարունակ մնում էին անորոշ։ Հին Ղրիմի վրա պետ նշանակված և նրա հիմնադրման պատասխանատու կապիտան Թեմրեզը գրեթե ոչինչ չէր ձեռնարկում՝ կազմված ցուցակներով նահանգի տարբեր քաղաքներից հայերին հիմնադրվող քաղաքը տեղափոխելու ուղղությամբ։

Հին Ղրիմի հայկական գաղութի ստեղծման գործում վճռական բեկում տեղի ունեցավ 1805—1806 թթ., երբ հարցի լուծման նախաձեռնությունն իրենց ձեռքն են վերցնում նշված հավատարմատարները և երբ ղրիմահայերի անունից կատարած նրանց միջնորդությունն ու խնդրանքները, վերջիվերջո, գործնական հետևանքներ են ունենում։ 1805 թ. նախագծվում և տրվում է Հին Ղրիմ քաղաքի կառուցման հատակագիծը[25]։ Դրանից հետո Ռ. Բեդրոսովն ու Խ. Մանուկովը տեղական իշխանություններին դիմում էին, ըստ էության արդեն

---

23 «Собрание актов», т. I, էջ 219—224։

24 Государственный исторический архив Одесской области (այսուհետև՝ Одесский облархив), ф. I, оп. 221, д. 2, թ. 24։

25 Крымский областной государственный архив (այսուհետև՝ Крымоблархив), ф. 67, оп. 1, д. 28, թ. 4.

խնդրելով նրանցից՝ օժանդակել Ղրիմի տարբեր քաղաքներից հայերին Հին Ղրիմում հավաքելու գործին։

Հայերի ներկայացրած խնդրանքների, ինչպես և դրանց հիման վրա Դյուկ դե-Ռիշելյեի ու Տավրիկիայի նահանգապետի կարգադրությունների համաձայն, տավրիկյան արքունական էքսպեդիցիան վճռում է.

1. Թեոդոսիայում, Ղարասուբազարում, Սիմֆերոպոլում, Եվպատորիայում և Հին Ղրիմում ապրող հայերին, հավասարապես նաև նույն քաղաքներում, ինչպես նաև Բախչիսարայում ու Պերեկոպում գտնվող արտասահմանից եկած նրանց ազգակիցներին հրովարտակի հիման վրա բնակության գրանցել Հին Ղրիմ քաղաքում։

2. Կազմել Թեոդոսիա, Ղարասուբազար, Սիմֆերոպոլ, Բախչիսարայ, Եվպատորիա, Պերեկոպ և Կերչ քաղաքներում վաղուց ի վեր գրանցված հայ վաճառականների ու մեշչանների ցուցակները և ուղարկել այդ քաղաքների իշխանություններին այն հաշվով, որպեսզի նրանցից յուրաքանչյուրին հարցում կատարվի՝ ցանկանո՞ւմ է արդյոք տեղափոխվել Հին Ղրիմ, թե՞ ուզում է մնալ իր տեղում։

3. Հարցում կատարել այն մասին, թե Ղարասուբազարի հայ-կաթոլիկ դատարանի իրավասությանը ենթակա վաճառականներն ու մեշչանները, որոնք ցանկություն են հայտնել մտնելու Հին Ղրիմի հայ համայնքի մեջ, ի՞նչ դավանանքի են՝ կաթոլիկ թե լուսավորչական, և արդյո՞ք համաձայն են մտնել Հին Ղրիմի հայկական ռատուշայի իրավասության տակ. եթե այո, ապա նրանց գրանցել քաղաքի բնակիչների ցուցակներում և այդ մասին հայտնել ատյանին։

4. Կազմել Հին Ղրիմում բնակվել ցանկացող նորնախիջևանցիների անվանական ցուցակները և դրանք ուղարկել Եկատերինոսլավի արքունական պալատ. խնդրել, որպեսզի պալատը այդ ցուցակները հանձնի Նոր Նախիջևանի մագիստրատին և կարգագրի վերջինիս կատարելու համապատասխան շտկումներ՝ թե այս հայերից, ըստ հաշվեհամարի, ովքեր են գրանցված վաճառականների և մեշչանների դասերում, նկատի ունենալով միաժամանակ այն հանգամանքը, որ նրանցից շատերն իրենց ընտանիքներով քսան և ավելի տարիներ ապրում են Ղրիմում, ունեն առևտրական և այս երկրին բնորոշ արհեստագործական ձեռնարկներ, հիմնել են իրենց տնտեսությունը և, ընդ որում, 1805 թ. մարտի 31-ին սենատի ընդունած հրամանի համաձայն պարտավորվում են կրկնակի հարկեր վճարել՝ իրենց կրկնակի ունեցվածքի[26] դիմաց՝ Նախիջևանում և Ղրիմում[27]։

Դժվարություններով և չարչարանքով հանդերձ, այնուամենայնիվ, գրեթե անմարդաբնակ ու ավերակ դարձած Հին Ղրիմի, երբեմնի հայաբնակ ու վեհաշեն Սուրխաթի բնակեցումը հայերի կողմից իրականացվում էր։ Այդ գործը առավել նորմալ և արագ ընթացք է ստանում, երբ նրա կենսագործումը անցնում է Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշայի տնօրինությանը։ Ռատուշայի ձեռնարկած միջոցառումների շնորհիվ քաղաքը գնալով հայաշատ էր

---

26 Ունեցվածք ասելով չպիտի հասկանալ միայն ուղղակի իմաստով։ Կրկնակի ունեցվածքի դիմաց հարկ վճարելու խնդիրը առաջանում էր պարզապես այն պատճառով, որ դրանցված լինելով Նախիջևանի բնակչության կազմում, նրանք իրավական տեսակետից օգտվում էին այդ քաղաքի համայնքին տրված տնտեսական և այլ կարգի արտոնություններից և դրանց դիմաց պետք է հարկեր վճարեին, մի բան, որից Ղրիմ փախածները չէին հրաժարվում։

27 Одесский облархив. ф. 1, оп. 221, д. 2, *թթ. 17—20.*

դառնում։ Հայտնելով այդ մասին Դյուկ դե-Ռիշելյեին, Տավրիկիայի փոխնահանգապետը նույն թվականի մարտի 12-ին նշում էր, թե նորերս հիմնադրված Հին Ղրիմ անունը կրող հայկական քաղաքը 1804 թ. և մանավանդ ռատուշան բացվելուց հետո բոլորովին նոր տեսք է ստացել։ «Այնտեղ տեղափոխվող հայերը,—տեղեկացնում էր նա Ռիշելյեին,—ռատուշան բացվելուց հետո այդ քաղաքում հաստատելով մշտական բնակություն, ժամ առ ժամ գեղեցկացնում են քաղաքը՝ ինչպես տներ, կրպակներ, իջևանատներ կառուցելով, այնպես էլ առավել անհրաժեշտ այլ հաստատություններով։ Նոր բնակեցված այս քաղաքի բնակիչների զգալի մասը Նախիջևանի հայեր են, որոնք թեև հաշվեհամարով գրանցված են այն քաղաքում, բայց անձնագրերով մշտապես ապրում են Հին Ղրիմում»[28]։

Եվ, իրոք, 1807 թ. օգոստոսին, փաստորեն մեկ տարում, հայերը Հին Ղրիմում արդեն կառուցել էին 160 նոր տուն, իսկ քաղաքի բնակչության թիվը հասել էր 1500-ի, ճնշող մեծամասնությամբ հայեր[29]։ Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշայի տվյալներով 1810 թ. քաղաքում ապրում էին 1307 հայեր և 333 այլազգիներ։ Նույն տվյալներով հայերը քաղաքում կառուցել էին 165 նոր տուն, 4 քարվանսարա, 95 կրպակ, 6 սրճարան և այլն[30]։ Քաղաքի բնակչության թիվը դարի կեսերին հասնում է արդեն շուրջ 4000 մարդու։

Ղրիմահայ գաղութի վերականգնման նախաձեռնողներից էին նոր Նախիջևանի հայերը։ Հայտնի է, որ 1778 թ. արտագաղթեցման ժամանակ սրանց ճնշող մեծամասնությունը համաձայն չէր թողնել իր դարավոր հայրենիքը և տեղափոխվել նոր բնակավայրեր, ուր ամայի հողի վրա ամեն ինչ պետք էր սկսել նորից։ Այնինչ Ղրիմում մնալու էին նրանց տները, պարտեզներն ու այգիները, արհեստանոցները, հավատատեղիները և, վերջապես, հարազատների գերեզմանները։ Պարզ է, որ ակամայից գաղթեցված ղրիմահայերի մի մասը չէր ուզում հաշտվել իր հայրենիքից մեկընդմիշտ զրկվելու մտքի հետ։ Ղրիմ ետ դառնալու ցանկությունը օրըստօրե աճում և ավելի մեծ թվով մարդկանց էր համակում մանավանդ տնտեսական այն մեծ դժվարությունների հետևանքով, որոնց նրանք հանդիպում էին իրենց նոր բնակավայրում։ Հայերը չէին կարող չտեսնել, որ իրենց այս նոր բնակավայրը շատ կողմերով՝ թե՛ աշխարհագրական դիրքով և թե՛ տնտեսական զարգացման ազդակներով զիջում է Ղրիմին։ Նախ, առևտրի համար հարմար իր դիրքով Ղրիմը XVIII դարի վերջին և XIX դ. սկզբներին, անշուշտ, գերազանցում էր Սբ. Դմիտրի Ռոստովսկու շրջանում ընկած տափաստաններին, որ հատկացվել էին հայերին։ Եվ դա ոչ միայն արտաքին, այլև բուն Ղրիմում ծավալվող առևտրի առումով։ Ղրիմում հայ առևտրականը ավելի շատ սպառողներ, իսկ արհեստավորները՝ ավելի շատ պատվիրատուներ կգտնեին, քան թե նոր յուրացվող հողերում։ Բայց ամենից շատ Ղրիմ էին ձգտում գաղթեցվածների աշխատավորական, առավել աղքատ շերտերը և գյուղացիները։ Եվ դա հասկանալի է. միջակ և աղքատ արհեստավորների ու բանվորների համար նոր հաստատվող քաղաքում շատ ավելի դժվար էր զբաղմունք գտնել, քան թե Ղրիմում, ուր նրանք էին հոգում արհեստներից հեռու կանգնած թաթար բնակչության պահանջները։

---

28 Նույն տեղում, թ. 135.

29 Крымобархив, ф. 67, оп. 1, д. 8, թ. 2 об.

30 Նույն տեղում, դ. 35, թ. 24։

Նախիջևանից Ղրիմ քաշվող հայերի այս մտայնությունը արտահայտող բազմաքանակ փաստաթղթերից բերենք միայն մեկը։ Դա Եվպատորիայի քաղաքային մագիստրատի կողմից 1795 թ. հունիսի 26-ին Տավրիկիայի արքունական պալատին ներկայացրած զեկուցագիրն է, որտեղ ուղղակի մեջ են բերված նախիջևանցի հայերի պատճառաբանություններն իրենց Ղրիմում մնալու վերաբերյալ։ «Նրանք (նախիջևանահայերը—Վ. Մ.) հնուց ի վեր լինելով բնիկներ, լիովին ծանոթ լինելով այստեղի առևտրին,—գրում էր մագիստրատը,—առավել ընդունակ են զբաղվելու դրանով և դրա միջոցով կապիտալ շահել։ Իսկ արվեստագործները (գեղարվեստական արհեստներով զբաղվողները—Վ. Մ.) և արհեստավորները մինչև արտադաղթեցումը սովորել են այստեղի արվեստագործությունն ու արհեստները, որոնցով զբաղվել կարող են միայն այս երկրամասում։ Մինչդեռ Նախիջևանում ապրողները բոլորովին զրկված են դրանով զբաղվելու միջոցով հայթայթելու իրենց և իրենց ընտանիքների ապրուստը»[31]։

Այսպիսին էր արհեստավոր և առևտրական փախստականների վիճակը։ Իսկ գյուղացիների՞նը։ Միթե պարզ չէ, որ այգեգործությանը ընտելացած զրիմահայ գյուղացին սկզբնական շրջանում դժվարությամբ պիտի համակերպվեր զուտ դաշտավարությամբ զբաղվելու իր նոր վիճակին։ Այս բոլորից բացի, բնակչության աշխատավոր շերտերի՝ նոր բնակավայրերից դեպի Ղրիմ փախչելը ստանում էր, անշուշտ, նաև սոցիալական բողոքի նշանակություն, բողոք, որը նրանք պասսիվ ձևով արտահայտում էին մասամբ իրենց արտագաղթի պատճառը դարձած ունևոր դասի հանդեպ։

Ղրիմը Ռուսաստանին միացնելուց հետո Նախիջևանից այնտեղ հայերի կատարած փախուստը պարբերական բնույթ էր ընդունում։ Ոմանք Ղրիմ էին անցնում ընտանիքներով կամ միայնակ, առանց որևէ թույլտվության, իսկ ոմանք էլ՝ Նոր Նախիջևանի մագիստրատից Ղրիմում առևտուր անելու ժամանակավոր անձնագրերով, որոնց ժամկետը լրանալուց հետո հրաժարվում էին վերադառնալ։

Նոր Նախիջևանից Ղրիմ փախած հայ ընտանիքների հարցը երկար տարիներ կովախնձոր էր դարձել Նոր Նախիջևանի մագիստրատի և նահանգական ու տեղական իշխանությունների միջև։ Խնդրի լուծումը ձգձգվեց երկու տասնամյակ, մինչև որ 1814 թ. օգոստոսի 31-ին կառավարիչ սենատը փախստականների մի մասին, 236 ընտանիքի, որոնք Նոր Նախիջևանում չունեին անշարժ գույք, թույլատրեց մնալ Ղրիմում[32]։ Մյուս փախստականները պարտավոր էին վերադառնալ Նոր Նախիջևան։ Այսպիսով, Ղրիմում մնում էր աղքատ դասը, սակայն Նոր Նախիջևանում անշարժ գույք ունեցող փախստականների հիմնական մասն էլ հապար ու մի պատրվակով խուսափեց վերադառնալ այնտեղ և հաստատվեց Ղրիմում։ Ավելին, հետագայում ևս առանձին ընտանիքներ շարունակում էին Նոր Նախիջևանից անցնել Ղրիմ։

Ղրիմահայությունը XIX դ. սկզբներին համալրվում էր նաև դրիգորիոպոլցիների հաշվին։ 1802 թ. հունվարի 30-ին կառավարիչ սենատին իջեցրած գերագույն հրամանը, նկատի ունենալով Գրիգորիոպոլի անհարմար դիրքը առևտրի և արհեստագործության զարգացման համար, նրա բնակիչներին թույլ էր

31 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, ց. 1, գ. 1465, թ. 172բ և 184։

32 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 143, թ. 2.

տալիս տեղափոխվել այլ վայրեր, այդ թվում նաև Ղրիմ։ Այդ նույն թվականին նշանակալից թվով գրիգորիոպոլցիներ բնակություն հաստատեցին Հին Ղրիմում. սրանք այն աղքատ հայ ընտանիքներն էին, որոնք հեռացվել էին Գրիգորիոպոլից՝ նրանց «ազգակիցների միջև խաղաղություն հաստատելու համար»[33]։

* * *

Չնայած Նոր Նախիջևանից դեպի Ղրիմ հայերի կատարած վերաբնակեցմանը, այնուհանդերձ, XIX—XX դարերում ղրիմահայության մեջ գերակշիռ թիվ էին կազմում ոչ թե նրանք, այլ Արևմտյան Հայաստանից և Թուրքիայի զանազան քաղաքներից ու շրջաններից տարբեր ժամանակներում մասսայաբար կամ առանձին ընտանիքներով Տավրիկիա գաղթած հայերը։

Հայերը Արևմտյան Հայաստանից և Թուրքիայի շրջաններից հեռանում էին տնտեսական ու քաղաքական այն ծանր պայմանների և հետապնդումների պատճառով, որոնք տարեցտարի գնալով ավելի էին սաստկանում։ Այս տեսակետից բնորոշ է Ռուսաստանի ներքին գործերի մինիստրին Ամասիայի բնակիչ Հովհաննես Հարությունի Իլինկիրյանի 1811 թ. ապրիլին գրած գիմումը, որտեղ նա, կարծես թե ամփոփելով իր նման հազարավոր արևմտահայերի ցանկությունը, գրում էր. «Հայտնի է Ձերդ գերազանցությանը, որ թուրքական տիրապետության տակ գտնված և այժմ էլ գտնվող հայերը, կեղեքված այդ ծանր լծի տակ, ձգտել և հիմա էլ ձգտում են ազատվել նրա (Թուրքիայի— Վ. Մ.) իշխանությունից, որպեսզի իրենց համար գտնեն հուսալի կառավարություն ու հանգիստ այլ պետություններում և ըստ մեծի մասին Ռուսաստանում»[34]։

Պատմական իրողությունն այնպիսին էր, որ Ռուսաստանի ժողովուրդների համար բանտ դարձած ինքնակալական կարգերը, ճորտատիրության ամենաղաժան պայմանների պահպանությամբ հանդերձ, զգալի արտոնություններ էին շնորհում օտարերկրյա գաղթականներին, այդ թվում նաև հայերին։ Այս քաղաքականությունն, անշուշտ, ընդհանուր ոչինչ չուներ օտարահպատակ քրիստոնյաների հանդեպ ռուսական թագավորների «փրկարար» դերի մասին ազնվականական պատմագրության տարիներ շարունակ թմբկահարած տեսակետի հետ։ Դա պարզապես թելադրվում էր Ռուսաստանի և, հատկապես, մոտիկ անցյալում նրան միացած նահանգների տնտեսական զարգացման և այդ շրջանների բնակեցման անհրաժեշտությամբ։

Հայերի Թուրքիայից Ղրիմ գաղթելը կապված էր նաև առևտրի, արհեստագործության, այգեգործության և շերամապահության զարգացման համար թերակղզու ունեցած հարմար դիրքի հետ։ Թուրքիայից Ղրիմ գաղթելու գաղափարին հավանություն էր տալիս և նրա իրականացմանը հնարավորին չափ նպաստում էր Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը։ Ինչպես նշվեց, 1790-ական թթ., այս կամ այն առիթով իշխանություններին արած իր դիմումներում նա անընդհատ արծարծում էր Թուրքիայից եկած և առաջիկայում գալու նախապատրաստվող հայերին Ղրիմում առանձին բնակավայրեր և հողեր հատկացնելու հարցերը։ 1794 թ. նրան են դիմում Ղարասուբազարում հաստատված տաճկահպատակ ավելի քան 200 ընտանիք հայեր՝ Թեոդոսիայի մի մասը

---

33 ЦГИА СССР, ф. 383, оп. 29, д. 188, թ. 1 об.

34 Նույն տեղում, ф. 398, оп. 81, д. 1016, թ. 1.

և Հին Ղրիմը իրենց բնակության տալու համար թույլտվություն ստանալու խնդրանքով[35]։ Այս թույլտվությունը ստանալու անհրաժեշտությունը Հ. Արղությանը հիմնավորում էր նաև իր ձեռքի տակ ունեցած այն տվյալներով, որոնց համաձայն շուտով Ղրիմ էին դաղթելու մեծ թվով հայեր այլ երկրներից և մանավանդ Թուրքիայից[36]։

Եվ, իրոք, 1800 թ. հոկտեմբերի 21-ին Կոստանդնուպոլսի հայերից մեծ թվով ընտանիքներ գիմում են Ախտիյարի (Սևաստոպոլի) նավահանգստի մաքսատան դիրեկտոր հայազգի Տարաս Իվանովիչ Այվազովին, խնդրելով նրա միջնորդությունը իշխանությունների առաջ՝ Ղրիմ տեղափոխվելու թույլտվություն ստանալու վերաբերյալ[37]։ Պատահական չէր, որ հայերը դիմել էին նրա միջնորդությանը։ Սա այն աչքի ընկնող մարդկանցից էր, որոնք շոշափելի մասնակցություն էին ցուցաբերել 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո թուրքական շրջաններից հայերին Դնեստրի այս կողմը տեղափոխելու գործին[38]։

Փաստաթղթերից հետևում է, որ պոլսահայերին թույլ էր տրվել տեղափոխվել Ղրիմ։ Ի. Ի. Միխելսոնի ներկայացրած զեկուցագրի կապակցությամբ Ալեքսանդր I-ը կառավարող սենատին կարգադրում է քննարկել այդ հարցը և հարդել հայերի խնդրանքը[39]։

Միշտ չէ, որ հայերի Թուրքիայից Ղրիմ տեղափոխվելուն նախորդում էր Էման գրագրություն։ Հաճախ առևտրով ու արհեստագործությամբ զբաղվելու նպատակով գալով Ղրիմ, հայերը այնուհետև չէին հեռանում այնտեղից և հետագայում խնդրում թույլտվություն՝ ռուսահպատակություն ընդունելու համար։ Ամասիայի վիճակի առաջնորդ Աբրահամ արքեպիսկոպոսը 1816 թ. սեպտեմբերի 8-ին հատուկ դրությամբ խնդրում էր Մանվել վարդապետից Ամասիայի բոլոր հայերին «որք տասն կամ տասնևհինգ և մանաւանդ քսան ամաւ իսկ այդ երկիր (Իմա՝ Ղրիմում— Վ. Մ.) թափառեն, առ ի պաշտպանել զաստուածախնդիր օրենս՝ հրաման յարքունական հանեալ իբր յաքսորս մղեսցես զնոսա յերկիր իւրեանց»[40]։

1820 թ. հայ կաթոլիկների նկատմամբ Թուրքիայում ուժեղացած հետապնդումների պայմաններում բացվում է Թեոդոսիա քաղաքը նրանցով բնակեցնելու լայն հեռանկար։ Կաթոլիկ հայերի գործակալների տվյալներով, Կ. Պոլսում և փոքրասիական քաղաքներում՝ Եվդոկիայից մինչև Անկարա, Անկարայից՝ Տրապիզոն, Էրզրումից մինչև Դիարբեքիր բնակվող «15—20 հազար հայ կաթոլիկ ընտանիքները... փնտրում էին նոր հայրենիք»[41]։ Սրանց մեծամասնության հայացքները ուղղվում են դեպի Թեոդոսիա, «որտեղ ապրում էին նրանց հայրենակիցները»։ 1820 թ. սկզբներին դաղթի դիմող այս հայության դրավոր հանձնարարականները ձեռքներին Թեոդոսիայի քաղաքապետի մոտ են գալիս նրանց գործակալները։ Վերջիններիս ներկայացրած նամակներից և նրանց իսկ ասելուց հետևում էր, որ կաթոլիկ հայերը Թուրքիայից հեռանում էին

35 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, ց. 1, գ. 1465, թ. 54։
36 Նույն տեղում, թ. 66։
37 ЦГИА СССР, ф. 13, 1801, оп. 1, д. 28, թթ. 4—5,
38 Նույն տեղում, թ. 4ա։
39 Նույն տեղում, թ. 3։
40 Մատենադարանի արխիվ, ֆ. կաթողիկոսական դիվան, թղթ. 29, վ. 73։
41 Архив внешней политики России, ф. Главный архив П—19, 1820, д. 1, թ. 50 об.

ոչ միայն թուրքական իշխանությունների, այլև լուսավորչական հայ կղերի հետապնդումների պատճառով[42]։ Նախքան հայրենիքը թողնելու և իրենց ունեցվածքն ու տնտեսությունը տեղափոխելու մասին վճիռ ընդունելը նրանք փորձում են կառավարությունից ստանալ երաշխիք, քաղաքական հովանավորության նման մի բան, որը կկարողանային օգտագործել գաղթի ժամանակ ծագած դժվարությունների դեպքում[43]։

Չնայած երկրամասի տնտեսական զարգացման համար կաթոլիկ հայերի մասսայական այդ գաղթից ակնկալվող լավագույն հեռանկարին, ռուսական կառավարությունը և ինձամբ ինքը՝ Ալեքսանդր I-ը, մեծ զգուշություն են ցուցաբերում այս խնդրում՝ պարզապես չսրելու համար հարաբերությունները սուլթանական Թուրքիայի հետ։ Թեոդոսիայի քաղաքապետ Էնգելի միջնորդագիր-զեկույցի առթիվ Ալեքսանդր I-ը կարգադրում է կաթոլիկ հայերին թույլ տալ գաղթելու Ղրիմ ճիշտ այն հիմունքներով, ինչպիսիք տրվում են օտարերկրյա բոլոր գաղթականներին։ Սակայն Կոստանդնուպոլսի ռուսական միսիան «այս գործում բոլորովին և ոչ մի մասնակցություն չպիտի ունենա», մի բան, որ խնդրում էին հայ կաթոլիկները՝ հովանավորություն ունենալու համար։ Միաժամանակ ինքնակալը քաղաքապետին կարգադրում էր «այս հարցով ոչ մի արտասահմանյան գրագրություն չձեռնարկել, որպեսզի չանվանարկվեն Բ. Դռան հետ ունեցած մեր դիվանագիտական հարաբերությունները»[44]։

Ռուսական կառավարության բացահայտ քաղաքական հովանավորության բացակայության պատճառով Թուրքիայից կաթոլիկ հայերի մասսայական այս արտագաղթը տեղի չունեցավ, բայց XIX դարում ղրիմահայության մեջ կարելի էր հանդիպել նրանց շատ ու շատ ներկայացուցիչների, որոնք այստեղ էին եկել տարբեր տարիներ՝ առանձին ընտանիքներով կամ էլ միայնակ։

Թուրքիայից Ղրիմ գաղթող հայերի մի մասը իր բնակությանը օրինական տեսք էր տալիս և, անցնելով բյուրոկրատական բոլոր աստիճանները, սկսած քաղաքային ոստիկանատներից ու ռատուշաներից ընդհուպ մինչև նահանգական վարչությունն ու ներքին գործերի մինիստրությունը, ընդունում էր ռուսահպատակություն։ Մի մասն էլ, թեև չէր դիմում այդ քայլին և ձևականորեն պահպանում էր թուրքահպատակություն, բայց ըստ էության մնում էր իբրև Ղրիմի մշտական բնակիչ, որովհետև սրանք տասնյակ տարիներով, երեխաներով ու թոռներով ապրում էին Ղրիմում, ունեին իրենց տունն ու տեղը, տնտեսությունը և առհասարակ Թուրքիա վերադառնալու և ոչ մի մտադրություն չունեին։

Թուրքիայից դեպի Ղրիմ հայերի կատարած տեղափոխությունները, որ դարերի տրադիցիա ունեին և նոր խթան էին ստացել հատկապես թերակղզին Ռուսաստանին միացնելուց հետո, չավարտվեցին միացմանը հաջորդած 2—3 տասնամյակներով. դրանք պարբերական բնույթ էին ընդունել ամբողջ XIX դարում և XX դարի առաջին երկու տասնամյակներին։

Հայ ազգաբնակչությունը Ղրիմում հիմնականում կենտրոնացված էր Հին Ղրիմում, Թեոդոսիայում, Սիմֆերոպոլում, Ղարասուբազարում, Արմյանսկի

---

42 Նույն տեղում, թ. 5։
43 Նույն տեղում, թ. 5բ։
44 Նույն տեղում, թ. 1ա, բ։

Բաղարում, Եվպատորիայում, Յալթայում և բազմաթիվ գյուղատիպ վայրերում։

Հայերի դեպի Ղրիմ կատարած անընդհատ տեղաշարժերի հետևանքով նրանց թիվը տասնամյակ առ տասնամյակ մեծանում էր. XIX դարի 40-ական թթ. կեսերին այն հասնում էր 5400 հոգու, 60-ական թթ. վերջերին՝ 7000-ի, դարավերջին՝ 9000-ի, իսկ 1913—1914 թթ.՝ 14—15 հազարի (համեմատական տվյալների համաձայն)։ Այս թվաքանակների մեջ չէին մտնում հարյուրավոր տաճկահպատակ հայ ընտանիքներ, որոնք թեև ռուսահպատակություն չէին ընդունել, բայց մշտապես բնակվում էին Ղրիմում։

Կրկին հաստատվելով Ղրիմում և վերականգնելով հնամենի հայկական գաղութը, հայերը, օգտվելով տրված արտոնություններից և առանձնաշնորհումներից, գործուն մասնակցություն են ցուցաբերում թերակղզու տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքին։

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ КОЛОНИИ В КРЫМУ

(Конец XVIII—начало XIX века)

Доктор истор. наук В. А. МИКАЕЛЯН

(Резюме)

На основе архивных материалов в статье рассмотрены причины восстановления армянской колонии в Крыму в конце XVIII в. и в течение первых десятилетий XIX в., показаны процесс образования колонии, проникновение армянских переселенцев в разные города и местности полуострова, содействие русского правительства и его местных властей переходу армян в Крым, которое вытекало из общей программы правительства о заселении новоприобретенного края.

В составе населения крымской армянской колонии в XIX—XX вв. были выходцы из разных районов Западной Армении и беженцы из Новой Нахичевани. Армянское население размещалось в основном в Старом Крыму, Карасубазаре (Белогорске), Феодосии, Симферополе, Армянске и в некоторых сельских местностях.